

ՅԱԻԵԼՈՒԱՆ՝ «ԼՈՒՄԱՅ» ԱՄՍԱԳՐԻ

Արտուր Լէյստի

ՆԻՆՈ ՎԱՐԻՊԱՆԻՁԻ

պատմութիւն վրաց կեանքից

—

գերմաներէնից թարգմանեց

ԱՐԻՍՏՈՂՈՄ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆՑ

—

Արագածիւնի Ս. Գրգորեանի, Մոսկովսկի փողոց, № 5.

ԹԻՖԼԻՍ 1906

Գլուխ առաջին

«Այ՛ դու բարով եկար հազար բարի, մեր սիրուն օրիորդ, ձայն տուեց պառաւ Սօփիօն, երբ տեսաւ Նինօյին՝ կառքից փոխելիս: «Այ՛ աղջիկ, դու հիանալի ես, սիրունացել ես և ծաղիկ նման գեղեցիկ ես: Տեսքիցդ աչքերս խտտում են, ճւղճ, ճւղճ: Այս խօսքերն ասելով՝ նա իսկոյն վազեց Նինօյի մօտ, գրկեց նորան և համբուրեց. ապա մի քանի քայլ յետ յետ դնալով՝ հիացած մնաց Նինօյի առաջին կանգնած: Թող տուր որ մտիկ տամ քեզ, դու ծաղիկ, դու անուշաբոյր վարդ, դու մինուհար զաւակ մեր լուսահոգի Վարօյի», շարունակեց նա, «Թող տուր որ քեզ լաւ տեսնեմ. անի անի, ճրքան գեղեցիկ ես դու՛ զնա, ես չեմ ուզում քեզ տեսնել, դու հիանալի ես: Աչքերս կարող են կուրանալ՝ եթէ ես քո արևի նման պայծառ երեսիդ երկար նայեմ»: Այս ասելով նա կրկին յետ դարձաւ և մի քանի քայլ Նինօյից առաջ վազեց, բայց հետեւեալ ակնթաթում կրկին կանգ առաւ Նինօյի առաջին և նրա ձեռքից բռնած սկսեց քաշել սանդուղներէից դէպի վեր դէպի տան առաջնամասի ապակէ սրահը:

— «Ա՛խ, քուտանամ ես», ասաց Սօփիօն, «անի քուտանամ, որ քո բարեսիրտ մայրդ այլևս կենդանի չէ: Ախ, եթէ նա քեզ այդպէս իւր առաջին տեսնէր. այ՛ աղջիկ, Աստուած էլ գիտէ, որ դու կարող ես այդ քո տեսքովը մարդու անմահացնել»:

— «Է՛հ, լաւ, Սօփիօ, բաւական է, վերջացրո՛ւ, ասաց Նինօն սրտնեղած և ձեռքը յետ քաշեց պառաւի ձեռքից:

— «Ո՛չ, ես չեմ ուզում լռել. ոչ, ես չեմ կարող լռել, քանի քո սիրուն երեսին մտիկ եմ տալիս: Ա՛խ, ճրքան կուրախանայ պառաւ մամդ, արի՛, շուտ արի՛ նրա մօտ: Նա վերնայարկում նստած է իւր սենեակում և քեզ է սպասում: Ինչպէս որ մարդ ձմեռ ժամանակ զարնան է կարօտում, այնպէս էլ նա քեզ է կարօտել, դու մայիսեան վարդ: Ա՛խ, եթէ դու գիտենաւ, թէ ինչպէս մենք բոլորս քեզ համար աղօթք էինք անում և ինչպէս մենք շնորհակալ պէտք է լինենք Աստծուց և սրբերից, որոնք մեր ձայնը լսեցին: Ա՛խ, դու գեղեցիկդ, դու չքեղ արեւ-գակ, դու»:

—«Մէկ թող գլխարկս և վերարկուս հանեմ» աղաչեց Նիկոն և մտաւ նախասենեակը, ուր խոհարար Նիկոն և մառանապետ Գէորգին դիմաւորեցին նրան և խորը գլուխ տուին:

—«Հա, լայն բաց արէք ձեր քնաթաթախ աչքերը», գոչեց Սփիօն նորից, «Մտիկ տուէք թէ որքան գեղեցիկ է սա, ուղիղ մայիսեան վարդ է», ասում եմ ձեզ:

Նիկոն և Գէորգին աչքերը լայն բաց արին, մինչև անգամ բերաններն էլ և նայում էին Նինոյի վերայ առանց բերներից մի բառ անգամ արտասանել կարողանալու:

—«Սպասի՛ր, հոգիս, քեզ օգնեմ», ասաց Սփիօն և ուզեց խլել Նինոյի գլխարկը:

—«Ո՛հ, ո՛հ, կարելի է ձեռներդ կեղտոտ են», ասաց Նինոն Սփիօնին չըթողնելով՝ ինքը ցածր առաւ գլխարկը և յետոյ էլ հանեց վերարկուն: Սփիօն այժմ կրկին ձեռները իբար խփեց:

—«Երազական մի պատկեր ես դո՛ւ», գոչեց նա, «եթէ ես աղամարդ լինէի աչքերս կը կապէի, որ քո տեսութիւնից չը կուրանայի: Բոյլդ մեր չինարի ծառի նման երկար է, ակն, այդ ինչպիսի կազմուածք ունես դո՛ւ: Ա՛յ աղջիկ, ես քեզ ասում եմ, որ բոլոր աղամարդկանց կը կատապնցես դու»:

Նինոն ծիծաղեց և մօտեցաւ հայելուն որ մօզերը ուղղի:

—«Դէհ, արի՛ գնանք մամիդ մօտ. նա անհամբերութիւնից կը մեռնի, որ չէ կարող իւր մայիսեան վարդը տեսնել», ասաց Սփիօն և առանց Նինոյին ռպասելու վազեց վերին յարկի ծայրէ մեծ սենեակը, ուր մամը մեծ թաղթի վերայ նստած խոշոր հատերով դեղին սաթէ տէրողորմեան մէկ ձեռից միւսն էր անցնում անհամբերութիւնից:

Տիրուհի, գերերջանիկ տիրուհի. աղաղակեց Սփիօն դեռ ևս սենեակի չէմքի մօտ: Թոռնիկդ ճշմարիտ որ հրեշտակի նման է. աչքերս համարեա՛ կսկծում են, որովհետեւ նրա գեղեցկութիւնը աչքերս չլացրել են: Տէս ահա նա գալիս է: Մէկ տես, թէ ինչպէս հիանալի է»:

—«Ձաւակս, զաւակս, իմ ամենաթանգագին զաւակս», գոչեց պառաւ մամը. «մօտ արի՛ քո մեծ մօրը» ասաց նա երբ Նինոյին տեսաւ ներս մտնելով—«Թող քեզ մէկ զրկեմ և կուրծքիս սեղմեմ: Ա՛յ իմ հրեշտակ, ակն, դու թանկագին գոհար իմ անմոռանալի Վարօյի»:

Նինոն փոքր ինչ կարմրեց և գլուխը խոնարհեցրեց մեծ մօր կրծքին, որ գորովանօք համբուրեց նրա չըթունքներն ու

ձակատը և ապա սկսեց մեղմութեամբ նրա մազերը ու այտերը շոյել:

«Փառք քեզ, Տէր և փառք ձեզ Վրաստանի սրբեր, որ դուք Նինոյին ողջամբ և երջանիկ կրկին մեր տուն վերադարձրիք, ասաց պառաւ մամը և մի քանի անգամ երեսը խաչակնքեց: Նոյնը արեց և Նինոն և երկուսն էլ լռիկ մի մի աղօթք կրկնեցին իրանց յոյժերով: Երբ աղօթքը վերջացաւ, այնպիսի տիկինը դառնալով մօտի սենեակի կողմը ձայն տուեց՝ «Սօսիկօ, Վանօ, դէ՛ շուտ կանչեցէք իշխանին. նա այժմ այգիումն է: Դէ՛ շուտ վազեցէք և նրան ասացէք, որ մեր Նունիկը եկել է: Նոյնպէս այստեղ կանչեցէք ծերունի իշխանին: Խնչպէս կ'ուրախանան նոքա. ճշմարիտ որ այսօր տօն է մեզ համար»:

Ծերունի տիկինը հարկաւորութիւն չունէր բարձր ձայնով կանչելու, որովհետեւ Սօսիկօն և Վանօն ձեռները կրծքերին դրած կանգնած էին դռան մօտ և հիացած միմեանց հետ էին փսփսոսում: Նրբ երկուսն էլ դուրս շտապեցին, վազելով ներս մօտան գերուկ Դարիկօն և կարմրակն Թասօն:

«Ա՛խ, որքան լուր է այստեղ: Ա՛խ, դու մայիսեան վարդ, թո՛ղ քեզ ողջունենք և համբուռենք», ասաց Դարիկօն և զրկեց Նինոյին:

«Քնած եմ թէ արթուն, երկրիս վրայ թէ երկնքում» ձեռները կրծքին դրած և մի քանի քայլ հեռուն Նինոյի հանդէպ կանգնած ասում էր Թասօն. «Ո՛չ, երազիս մէջ չէ, որ քեզ տեսնում եմ, որովհետեւ դու ես, իսկապէս դու, մեր Նինօն, մեր լուսահոգի Վարոյի միակ զաւակը: «Այո՛ դու ես» բարձրացնելով ձայնը կրկնեց Թասօն և թռչելով հասաւ Նինոյի մօտ, մի կողմ հրեց Դարիկօյին և Նինոյին գրկելով նրա այտերը համբուրեց: Փառք Աստուծոյ, որ դու կրկին մեզ մօտ վերադարձար. այժմ դու մեզ մօտ կը մնաս, և մենք քեզ այլևս չենք թողնիլ, որ գնաս, մինչև անգամ մեր երկրի ամենագեղեցիկ և ամենահարուստ իշխանն էլ որ գայ քեզ փին ուզելու: Ա՛խ, որքան գեղեցիկ, որքան նրբակազմ ես: Մեր ամբողջ երկրում չը կայ մէկը որ քեզանից աւելի գեղեցիկ լինէր»:

Դարիկօն և Թասօն չէին կամենում վերջ դնել իրանց հիացման արտայայտութիւններին, նամանաւանդ որ գիտէին, որ նրանց ամեն մի խօսքը հաճոյք, մինչև անգամ ուրախութիւն է պատճառում պառաւ տիկնոջը, հեռակապէս աշխատում էին միանգամ ասածները տասն անգամ կրկնել աւելի և աւելի գեղեցիկ խօսքեր որոնելով: Թեպէտ սրանց և պառաւ Սօսիկօյի խօսքերի մէջ փոքր ինչ շողորորթութիւն կար, բայց նա ըստ մեծին մա-

սին անկեղծ էր, որովհետեւ երեքն էլ երկար ժամանակ ծառայում էին Վարիպանիձէի տանը, այնպէս որ մասամբ այդ գերպատանի տնգամենքն էին համարւում և Նինոյի վերայ նայում էին իբրև իրանց արեւակցի վերայ: Գարիկօն հիւանդ Վարոյի, Նուարդի մօր, խնամողն էր: Թասօն պառաւ տիկնօջ նաժիշտն էր և շարունակ նրա մօտն էր գտնւում, այնպէս որ այս սենեակում իսկապէս տէր էր, այստեղ էր քնում, շարունակ ընկերութիւն էր անում պառաւ տիկնօջը և իւր մօտն ունէր այդ սենեակի բոլոր պահարանների և արկղների բանալիները: Նոյնպէս էլ պառաւ Սօփիօն մի նշանաւոր գեր էր խաղում տանմէջ, որովհետեւ շատ տարիներէից ի վեր տան ամբողջ տնտեսական մասը նրա ձեռին էր և Վարոյի մահից յետոյ տան մէջ ոչինչ չէր կատարւում առանց նրա գիտութեան և համաձայնութեան:

Երբ կանանց ուրախական յուզմունքը մասամբ հանդարտուեց և նոցա սկսեցին Նինոյին պատմել թէ ինչ փոփոխութիւններ են տեղի ունեցել նրա բացակայութեան ժամանակ, այդ միջոցին սենեակ մօտն Նինոյի հայր Վախտանգ և պապ Գրիգոր Վարիպանիձէ իշխանները:

Վախտանգ իշխանը յիսունի մօտ մի բարձրահասակ և գեղեցկադէմ անձն էր, իսկ Գրիգոր իշխանը մի եօթանասնամեայ ծերունի, որ չը նայելով հասակին, գեռ ևս առոյգ էր և ման էր գալիս հաստատուն քայլերով և գլուխը բարձր բռնած:

«Ահա քո սիրելին. վերջապէս նա մեզ մօտ վերադարձաւ», ասաց տիկինը. «նա արդէն սովորել է այն ամենը, ինչ որ համապատասխան էր նորա դիրքին. բացի դորանից նա գեղեցիկ է և բարեկազմ», ասաց ավագարդ տիկինը:

Նինոյի հայրը ոչինչ չը պատասխանեց, այլ իրեն մօտեցող դատերը սեղմեց կուրծքին և ճակատը համբուրեց: Որ Նինօն գեղեցիկ և բարեկազմ էր, այդ նա գիտէր, որովհետեւ մի քանի շաբաթ առաջ նա ինքը Տփլիսումն էր: Նա իւր գասերը այցելում էր բոլոր հինգ տարուայ ընթացքում ամեն երեք կամ չորս ամիսը մի տնգամ: Այդ պատճառով էլ Նինոյի գեղեցկութիւնը նրան չը զարմացրեց, այլ այդ բանը աւելի զարմացրեց իշխան պապին, որը արդէն շատ տարի էր, որ Նինոյին չէր տեսել:

«Հը՛մ, ճիշտ մօր նման է. նոյն ձայնը, նոյն աչքերը և նոյն բարձր հասակը» ասաց նա, նայելով իւր առաջին կանգնած փոքր ինչ կարմրատակած թոռնիկին: «Ճայ Աստուած, որ բնաւորութեամբ էլ մօր նման լինի» մտապահ ինքն իրան: Սւ այս նորա ամենախոր ցանկութիւնն էր, որովհետեւ իւր հարս Վարոյին, որ

վեց տարի առաջ մասնաւոր տկարութիւնից յետոյ իւր մահկանացուն կնքեց, նրա բնաւորութեան, յատկութիւնների և նրա բարեսրտութեան համար իբրև հարազատ գտեր էր սիրում և երբէք նրա մասին չէր խօսում առանց նրա առաքինութիւններն ու բարեբարոյութիւնը գովաբանելու:

«Նա մի օրինակելի կնամարդ էր», կրկնում էր ծերունին ամեն մի դէպքում և տխրութեամբ գլուխը քարշ էր ձգում, որովհետև մինչ օրս էլ սրա համար այդ կորուստը անփոխարինելի էր, նամանաւանդ որ արդէն վաղուց գիտէր, որ իւր որդին կնոջ մահուամբ ոչ միայն իւր հաւատարիմ կենակցին կորցրեց, այլ և իւր կեանքի հաստահիմն նեցուկին: Ծերունին կոյր չէր և տեսնում էր, թէ ինչպէս տան կառավարութիւնը դարձ ի վար էր գնում և այն կալուածքը, որ տասն տարի առաջ ամենալաւ գրութեան մէջ որդուն էր յանձնել, տարեց տարի աւելի պակաս արդիւնք էր տալիս և իրանց մեծ փառաւոր այգին հետզհետէ խանգարւում էր:

«Ո՛ւր են այն ժամանակները, երբ ես այստեղ վեց հազար թունգի գինու խաղող էի քաղում» յանախ մտածում էր նա, երբ այգեկութի ժամանակ այգու մէջ վեր ու վար էր անում և աւելի համոզւում էր, որ գինին պակաս է ստացուելու: Հին ժամանակում այգին էլ ուրիշ տեսակ էր, մինչդեռ այժմ կիսով չափ վայրենացած... Շատ տեղերում վազների չորս կողմը ծածկուած էր աւելորդ խոտերով, մինչև անգամ մօտերքում բուսող պտղատու ծառերի նոր ընձիւղներով: Այսպիսի դրութեան մէջ ինչպէս կարելի է գինի ստանալ. արդէն քանիցս նա իւր որդուն զգուշացրել էր, որ այգին լաւ խնամեն, բայց միշտ պատասխան էր ստացել, թէ այդ բանը շատ փող է պահանջում, որովհետև մշակի վարձը այժմ աւելի մեծ է քան առաջ. բացի դրանից նա ուրիշ այնպիսի ծախսեր էլ ունի, որոց համար չը գիտէ թէ գրտեղից փող ձեռք բերէ:

— «Դու պէտք է ծախսերդ փոքր ինչ սահմանափակես», նկատում էր ծերունին առանց գիտենալու, թէ ինչպէս պէտք է այդ բանն սկսել, քանի որ տան դիրքը և պատիւը պահանջում էին ոչինչ չը պակասացնել և հարևանների մօտ ոչինչ բռնում յետ չը մնալ:

Զէ որ նա էր իշխան Վարիպանիձէն, ասել է, ամբողջ իմէթէթիայի առաջնակարգ իշխաններից մէկը և ինչպէս որ նրա հայրը իւր բարձր դիրքը կարևոր չքով և արժանապատուութեամբ հաստատած էր, նոյնը պարտաւոր է անել և ինքը: Իւր բոլոր կեանքում այդ յաղոգուել էր իրան և նա ամենքից պատուած և

յարգուած էր. նա միշտ կարողացել էր ուրիշներին օգնել և միշտ պատուով ու վայելուչ կերպով կատարել էր այն պարտաւորութիւնները, որ դնում էր նրա վերայ իւր բարձր դերքը: Իւր որդի Վախտանգին նա ուղարկեց Մոսկուայի համալսարանը և յետոյ պսակեց գեղեցիկ Վարոյի հետ, որ նոյնպէս Գօրիձէ յայտնի ընտանիքի զաւակ էր: Այդպէսով նրա որդին էլ իւր երկրում մի մեծյարգի և առաջնակարգ մարդ էր դարձել և երբ նրա դուստր Նինօն փոքր ինչ մեծացաւ, հայրը մի բոպէ էլ չը վարանեց նրա կրթութիւնը լրացնելու համար Տփլիսի ուղարկել:

Հինգ տարուայ չափ Տփլիսի մնալուց յետոյ, այժմ այդ դուստրը վերադարձել էր Բարուլի իբրև նորատի օրիորդ և, ի նկատի առնելով նրա ճամարտիւ ծանրաբարոյ և գեղատեսիլ երեւոյթը, երևում էր, որ բոլոր այն յոյսերը, ինչ որ իշխան պապը նրա վրայ դրել էր, նա էլ լրացրել էր: Շրջակայ գիւղերում և աւաններում հազիւ կարելի էր մի օրիորդ գտնել, որ նրան հաւասարուէր թէ գեղեցկութեամբ և թէ նուրբ սովորութիւնների մէջ: Այս բանը շատ վաղուց գիտէր նրա հայրը. իսկ իշխան պապը և պառաւ մամը (մօր մայրը) միայն այսօր նկատեցին այդ բանը, երբ Նինօն իւր բոլոր հրապոյրների և գերազանցութեան գիտակցութեամբ դիմաւորեց նրանց, նոյնպէս և մի առանձին փայլ, որ սրանց անյայտ էր Տփլիսի սալոնական կեանքից, լուսասփիւռ երևաց նրանց:

— «Սա միշտ ասում էի, թէ սա խիստ նման պէտք է լինի Վարոյին», ականց մեծ մայրը, երբ Նինօն սենեակից դուրս գնաց: Ինձ այնպէս է երևում, որ կարծես հանգուցեալը ջահելացել և գերեզմանից դուրս է եկել: Ճիշտ սրա նման էր նա քսան տարի սրանից առաջ երբ Վախտանգին առաւ:

— «Այո, մօրը նման է, շատ նման», նկատեց ծերունի Վարիպանիձէն: «Մինչև անգամ ձայնը նրանն է և երբսօ ծիծաղում է, այն ժամանակ նմանութիւնը խիստ ակներև է լինում»:

Էլ աւելի չխօսեց ծերունին: Երբ մամը անգամ ականց խօսել Նինօյի շուտ նշանադրութեան կարելիութեան մասին, իշխանը մասնակցում էր այդ խօսակցութեանը շատ ու կտոր նկատողութիւններով, որոնք նպատակ ունէին միայն բացատրութիւնները լրացնել:

— «Հանգիստ պէտք է սպասել», ահա թէ ինչ էր մտածում նա: «Դեռ չտապելու բան չկայ և այն անձը, որ Նինօյին առնելու է, գեռ այստեղ էլ չէ. իսկ առաջին պատահածին մենք ճշ մի կերպով չենք կարող տալ:

Սակայն մի քանի բոպէ անցած նա արդէն մտածում էր իւր

մի հեռաւոր Ձիգիանի անունով ազգականի վերայ, որ շատ դուր էր գալիս իշխանին և կարող էր բաւականութիւն տալ բոլոր այն պահանջներին, ինչ որ ինքը կամենում էր գտնել իւր թոռնիկի նշանածի անձնաւորութեան մէջ: Այս նա մտածում էր Ձիգիանի վերայ, որովհետեւ նրա մասին դեռ առաջ ևս մտածել էր, և միշտ ուրախանում էր, երբ Ձիգիանին այցելում էր սրա տունը:

— «Եւ նրանից լաւն ու արժանաւորը չեմ ճանաչում» փրսփսում էր ինքն իրտն իշխանը. բայց այս անգամ նրա մէջ ծագեց մի փոքրիկ կասկած, որովհետեւ այս իսկ միջոցին նա սահմանադիր վերայից լսեց Նինոյի զօրեղ և հրամայողական ձայնը: Այդ ձայնի մէջ չը կային հանգուցեալ վարոյի ձայնի մեղմութիւնն ու փափկութիւնը, այլ ընդհակառակը երևում էին խիստ զարգացած ինքնազդիտակցութեան և մի տեսակ յամառ կամքի սովորութիւն:

— «Եհտ, քնած էք, ինչ է: Շուտով արկղները բերէք այստեղ: Սա չեմ սիրում երկրորդ անգամ ձայն տալ», գոչեց Նինոն սպասաւորներին, որոնք ներքեւ նախասենեակում զբաղուած էին օրիորդի արկղները նրա սենեակը առնելու հարցով:

Թէ ինքը և թէ իւր որդին համարեա՞ն ոչ թէ ժամանակ չէին կանչում իրանց սպասաւորներին այդպիսի հրամայողական ձևով և ահա այդ պատճառով էլ Նինոյի արածը կրկնակի անախորժ թուաց ծերունուն: Մի ինչ որ օտար բան էր երևում Նինոյի ընաւորութեան մէջ. դա մասամբ մեծամտութիւն էր, որպիսի յատկութիւն ինքը չուներ և իւր գերդաստանի ոչ մի անդամի մէջ նոյնպէս չէր նշմարած: Յանկարծակի դժկամակութեամբ բռնուած, նա գուրս գնաց արօտը, որպէս զի յետոյ միասին ժողովուին պարտիզում: Սանդուղքի վերայ նա հանդիպեց Նինոյին, որ ծառաների առաջից գնալով՝ շտապում էր իւր սենեակը. նա լռիկ վազելով անցկացաւ պապի մօտից առանց նրան նայելու:

«Հըմ, օտարի նման փախչում է մօտից», մտածեց ծերունին և նեղացաւ նրա դէպի մեծ հայրը ցայց տուած անտարբերութեան մասին:

Սև երբ միայն կրկին տեղաւորուեց իւր սիրած տեղը այգու մէջ բարձրաբերձ կաղնու ծառի տակ և տեսաւ զուարթ կապուտակ երկինքը և պայծառ արևի ճառագայթներով լուսաւորուած հեռաւոր հովիտը, հետզհետէ անյայտացան և այն ստուերները, որոնք պատել էին նրա հոգին և նա մինչև անգամ ինքն իրան յանդիմանեց որ Նինոյին հենց առաջին օրը այդքան խիստ մեղադրում է:

«Ո՛վ գիտէ, կարելի է, Տիխիսում նա լաւ ընկերուհիներ

է թողել, որոնց կարօտը այժմ քաշում է՝, մտածում էր նա՝
«Այո նա դժուար ճանապարհ անցկացաւ և ի վերջոյ իսկապէս
նա սեզանից փոքր ինչ խորթացած պէտք է լինի: Այդ հասակի
մէջ հինգ տարին շատ ժամանակ է: Իսկ մօրաքոյրը, այս մօրա-
քոյրից Նինոյի անջատուելը զգալի պէտք է լինի: Զարմանալի-
չէ ուրեմն, որ նա փոքր ինչ նեղացած լինի և վերջապէս հայ-
րենիք վերադառնալը նրան այնքան չէ ուրախացնում, որքան
մենք սպասում էինք»:

Այս մտածութիւնները վերադարձին նրա զուարթութիւնը
և երբ այս անգամ Նինոյի զօրեղ և հնչիւն ձայնը կրկին լսեց, ու-
րախ էր որ նա փոքր ինչ կեանք բերեց այս մշտալուրի տան
մէջ և շարունակ քնկոտ սպասուորներին քնահարամ է անում
և սթափեցնում:

— «Սօսիկօ, Սօսիկօ, Կեսարէ՛ձ» կանչում էր Նինօն և իշ-
խան պապը կարծում էր, թէ լսում է փոքրիկ զանգակի հնչիւն-
ները, որովհետև այնքան մաքուր և դուրեկան հնչում էր նրա
ձայնը բաց լուսամուտից դէպի պարտէզը: Յետոյ լսեց նոյնպէս
իւր անունը: Նինօն սրահից դուրս եկաւ և նրան էր որոնում:

«Այստեղ եկ, այստեղ կաղնու ծառի տակը» ձայն տուեց
նա Նինօյին, որը մի բառնաչափ ուստիւններով հասաւ պապի
մօտ և նրա ծնկան վերայ դրեց մի գեղեցիկ գործուած մետաքսէ-
քսակ:

— «Բեզ համար եմ բերել, սիրելի պապիկս, սա իմ ձեռա-
գործն է», ասաց նա: Մերունի իշխանը ուրախութիւնից դողալով
մի քանի անգամ համբուրեց Նինօյի այտերը և նրան նստացրեց
իւր մօտ, երբ սա ուղեց կրկին փախչելու: Իշխանը համարեւ
հետաքրքրութեամբ էր դիտում Նինօյին, որովհետև իսկապէս նա
նոր էլ նշմարում նրա մէջ եղած հրապուրելի կողմերը, որոնք
իրբւն մի դիւթական զօրութիւն ազդում էին իւր վերայ: Նրա
բարձր կազմուածքի գեղանձնութիւնը և ճկունութիւնը, նրա խո-
շոր սևաթոյր աչքերի ջերմութիւնը, նրա ազնուատեսիլ գծա-
գրութիւնը այստեղ թեքուած արևի զուարթ պայծառութեան
մէջ երևում էին շատ աւելի որոշ կերպով, քան վերևում մեծ
մամի աղօտ սենեակում:

«Այսքան գեղեցիկ չէր մայրը», մտածում էր նա, «այսպէս
գեղեցիկ չէ եղել ոչ ոք մեր տոհմում»:

Նա այժմ իւր մաքի մէջ բոլորովին հաշտուեց Նինօյի հետ,
թէ նրա խիստ վարմունքի և թէ անտարբերութեան համար և
այլևս ոչ մի պակասութիւն չէր գտնում նրա մէջ: Կողմնակի
հայեացքով աչքի տակով նա հաճութեամբ նայում էր Նինօյի

վերայ և երբ սա միանգամ բարձր ծիծաղեց, այդ ծիծաղը այն-
քան դիւր եկաւ ծերունուն, որ նա զրկեց Նինօյին և նրա թշերը
համբուրեց:

— Աքանչելի աղջիկ ես դու, ասաց նա և մատով մի-
քանի անգամ թեթևակի բարախեց նրա արդէն բոլորաձև և գի-
րուկ ուսերին:

Նինօյի թարմ այտից և առողջութիւնից զեղուած մարմինը
կարծես, մայիսուայ օդի նման, նոյնպէս բուրմունք չէր արձա-
կում և եթէ իշխանը այս բոլորին պառաւ Սօփիօյի գովասանե-
ները լսէր, անկասկած նրա հետ կը համաձայնէր: Իսկ ինքը
արդէն հոգով և սրտով Նինօյի բարեկամն էր դառել:

Գլուխ երկրորդ:

Հետեւեալ օրը վաղ առաւօտեան Նինօյի հայրը արդէն
նստել էր ներքին ապակէ սրահում և խոհարարի հետ խորհրդակ-
ցում էր այդ օրը տեղի ունենալիք ճաշկերոյթի մասին: Նրա
հօրեղբոր գոռատը թամար ձալալիլին և սրա սկեսուրը, յետոյ,
դրացի Վասօ Գօնէլին և նրա հետ տիկին Մարիամը, այլի տի-
կին Շիկվարիձէն և մի քանի այլ անձինք նախընթաց օրը իրանց
այցելութեան մասին արդէն յայտնել էին: Որովհետև նրանք շատ
հետաքրքրուում էին օր առաջ տեսնել Նինօյին, այդ պատճառով
էլ չէին կամենում սպասել, մինչև որ Նինօն ինքը նրանց այցելէ:
Նինօյի հայրն էլ, որին յիշեալ անձանց դիտաւորութիւնը մասամբ
չողոքորթել էր, ահա այժմ զգաղուած էր իրան երախտագէտ ցոյց
տալու և եկողներին մի լաւ հիւրասիրելու մտքով:

Իւր տանուտիրական բոլոր պարտաւորութիւններից նա
ամենաբարեխիղճ կերպով կատարում էր հիւրասիրութիւնը և այս-
այնքան տւելի սիրով, քանի որ ինքն էլ վայելում էր ուրիշների
հիւրասիրութիւնը և նրանց հրաւերներին ուրախութեամբ մասնակ-
ցում: Հիւրերին նա սիրով ընդունում էր, որովհետև կնոջ մահից
յետոյ նրա սիրտը սկսեց մենակութիւնից նեղանալ և որովհետև
կալուածքի կառավարութիւնն էլ իւր կառավարչին էր թողել, այդ-
պատճառով նա շատ անգամ չը գիտէր թէ ինչ կերպով կարող
պէտքէ լինի օրը մթնացնել: Նախորդ տարիները նրա պարապման
սիրելի առարկան գրականութիւնն էր, մինչև անգամ ինքը մի
հատոր քնարական բանաստեղծութիւններ գրեց, սրոնց լսելու
համար հազիւ կարողացել էր մի նեղ շրջան գտնել. այս հան-
գամանքը կամաց կամաց թուլացրեց նրա բանաստեղծական
արամադրութիւնը և նա վերջապէս բոլորովին ձեռք վերցրեց

այդ բանից, մինչև անգամ նրա մէջ անյայտացաւ ուրիշի գրածը կարգալու ցանկութիւնն էլ: Ներկայիս համարեմ բոլոր վրացի մատենագիրների և գրողների դէմ նա մի տեսակ խիստ հակակրօնութիւն էր զգում, որովհետև նրա կարծիքով բոլորն էլ բթամիտ էին առանց ոյժի և սեփական մտքերի, միայն հներին էլ գնահատում, որովհետև սրանց գրութիւնները շատ անգամ կարգացած էր. հետևապէս այժմ ոչինչ չէր կարողում և մոռացել էր մինչև անգամ այն ինչ որ երբեմն սովորել էր և տարէց տալի աւելի մտածում էր մարմնի քան հոգու պահանջների վերայ: Նա երբէք մի աշխատասէր անձն չէ եղել, բայց առաջ գոնէ մի բանի ձգտում էր և որովհետև ոչինչ հետևանքի չ'հասաւ, այդ պատճառով էլ հաշտուեցաւ իւր ճակատագրի հետ առանց տրտնջալու: Յարմարութիւններով լի կեանքը, որպիսին վայելելու թոյլ էին տալիս նրա միջոցները, նրան բաւականացնում էին և եթէ փառասիրութիւնը երբեմնակի զարթնում էր նրա մէջ և նրան մի այնպիսի զործունէութեան էր ուղղում, երբ սա ուրիշների առաջ պէտք է երևէր, նրան ինքը քնացնում էր: Նրկու երեք կերուխումը, երբ նա երբէք այնպէս չէր զուարթանում ինչպէս ուրիշները, նրան ամեն բան մոռացնել էին տալիս և հաշտեցնում ճակատագրի հետ: Կարծես միայն ամենօրեայ սովորական բաները նրա համար նշանակութիւն ունէին և ամենից սիրով նա ըմբռնած էր խոհանոցին վերաբերեալ կարգադրութիւնները: Նա ժամերով խօսակցում էր խոհարարի հետ, հարցնում էր թէ արդեօք ի՞նչ կենսական մթերք կայ մառանում, պատուիրում էր այս կամ այն բանը գնել և այժմս էլ իւր ցանկութիւններն ու ցուցումներն էր անում առաջիկայ ճաշկերոյթի առթիւ: Այսօր էլ նա իւր խօսակցութիւնը շարունակեց մէկ ժամից աւելի և միայն այն ժամանակ արձակեց խոհարարին, երբ կարծեց թէ իւր ցանկութիւնները և կարգադրութիւնները բաւական կերպով քաջատրուած են և ապա թեքուեց բարձի վերայ, որպէս զի կատարած աշխատանքից փոքր ինչ հանգստանայ:

Թեպէտ արեգակը դեռ ևս այնքան էլ բարձր չէր կանգնած պայծառ երկնքի վերայ, այնու ամենայնիւ օդը տաք էր և հիւրերը շուտով գալու էին, եթէ նրանք կամենում էին խիստ շօքերից առաջ ստուերախիտ յարկի տակ մտնել:

Նիսօն դեռ ևս ննջում էր, երբ պառաւ Սօփիօն արդէն Էրկրորդ անգամ զգուշութեամբ սենեակի դուռը բաց արեց, որպէս զի տեսնի թէ արդեօք նա զարթնել է թէ ոչ: Ահա այդ ժամանակ Նիսօն տեսնում էր մի շատ հետաքրքիր երազ, որը ոչ այլ ինչ էր եթէ ոչ մի կրկնութիւն մերձաւոր անցեալից: Նա

տեսնում էր, թէ ինչպէս ինքը Տփլիսիսում նստած էր մօրաբքով հիւրասենեակում և մի ձեռագործով զբաղուելով խօսակցում էր Վանօ Գարեխի բանաստեղծի հետ, որի հետ իւր ծանօթութիւնը մի քանի շաբաթ առաջ տեղի էր ունեցել։ Այնուհետեւ բանաստեղծը մի 10—12 անգամ եղել է Նինօյի մօրաբքով մօտ և թեպէտ նա ընդունելութեան երեկոներին էր այնտեղ գտնուում, որտեղ գտնուում էին նոյնպէս նրա ընկերուհիները, բայց Նինօն շուտով նշմարեց, որ բանաստեղծի այդ այցելութիւնները աւելի իրան էին վերաբերում քան ուրիշին։ Նա առաջինը չէր որ քրծնում էր Նինօյին, այդ պատճառով էլ սա որոշեալ սառնութեամբ էր ընդունում նրա քննութիւնները և երբեմն նրանց վերայ ծիծաղում էր, երբ նա սկսում էր չափազանց քնքաբար խօսել Նինօյի հետ։ Նինօն այս բանը անում էր ոչ թէ նորա վերայ ծիծաղելու համար, այլ ցոյց տալու համար, որ նրա խօսքերին արժէք չէ տալիս և թէ նրանք իրան ամենին չեն անհանգստացնում։ Եւ իսկապէս էլ Նինօն առանց ցաւ զգալու տուել էր նրան մնաս բարովի հրաժեշտը, բայց այնու ամենայնիւ երազը, որ Վանօյին ներկայացրեց, հաճելի էր և երբ Նինօն աչքերը բաց արեց, ափսոսաց, որ երազը արդէն անցել էր։

Մի փոքր ժամանակ ևս նա մնաց անկողնում, յետոյ դուրս թռաւ այնտեղից, վազեց դէպի լուսամուտը և վարագոյրը յետ քաշեց։ Նինօյի համար աշխարհիս երեսին խաւարից աւելի զգուելի բան չկար։ Նա սիրում էր լոյսը, զուարթութիւնը և ուրախութիւնը. ամեն աղմուկ նրան բաւականութիւն էր պատճառում։ Նրա աչքերը կատարեալ բերկրութեամբ կլանում էին արևի լոյսը, որը այժմ ամեն բան լուսաւորելով դէպի սենեակը ներս էր հոսում և Նինօյին էլ ճառագայթների մի փնջով ցօղում։ Ակամայ նա կանգնած մնաց մինչ յատակը հասնող հայելու առաջին և նրա մէջը նայեց։ Նրա ճոխ մազերը ծնկանից էլ ցածր իջնելով ծածանում էին ձիւնափայլ չապկի վերայ, որը չը նայելով իւր ընդարձակութեանը, այնու ամենայնիւ պարզ ցոյց էր տալիս Նինօյի կազմուածքի հիանալի ձևերը։ Նրա երեսը ոչնչով չէր արտայայտում երեկուայ յոգնածութիւնը, նրա այտերը փոքր ինչ կարմրել էին և նրա խոշոր աչքերը փայլում էին կրկին պայծառ, զուարթ և ուրախ ինչպէս և առաջ։

Անբն հայեացքը նման է մի զուարթ ծիծաղի մօտ մի չաբաթ առաջ նրան ասել էր Վանօ Գարեխի բանաստեղծը և Նինօն քսան ու երեսուն անգամ քննում էր այս հայեացքը հայելու մէջ և ի վերջոյ խոստովանեց, որ բանաստեղծը արդար է։ Նա սկսեց ցածր ձայնով երգել մի երգ, որ յիշեալ բանաստեղծի

գրչից էր ծագել և որը այն ժամանակ բոլոր վրացի տիկիները
հրգում էին

Բո աչքը ինձ խբեց,
կրակով սիրտս վառեց,
Սև միայն քո հայեացքը
Տենչանքս հանգցրեց:

Սիրունի՛, միշտ ինձ նայի՛ր,
Սիրտս լցրու վերքերով:
Որոց քո մէն մի համբոյր
Նորագում է գիւթելով:

Սև երբ Նինօն այս երգը նոյն կերպ կրկնեց, ներս մտաւ
պառաւ Սօփիօն և ուրախ հիացմունքից ձեռները իրար խբեց:

«Ա՛յ, դու իմ արեգակ, դու», ձայնեց Սօփիօն: «ՄԻ՛ւր գտնեմ
խօսքեր քեզ յայտնելու, թէ՛ սրբան գեղեցիկ ես դու: Միայն հե-
քիաթ պատմողը կարող է այդ ասել, միայն նա, որի լեզուի վե-
րայ վարդեր են բուսնում»:

— «Խելօք կանց, Սօփիօ», ասաց Նինօն «վախի՛ է քեզ այդ-
պիսի բաներ խօսել. գնա ուղարկի՛ր Կէսարէային, որ օգնէ ինձ
զգեստներս հագնելու»:

— «Բո խօսքը ինձ համար հրաման է, թանկագին տիրուհիս»
ասաց պառաւ Սօփիօն, «Բի՛նչ դու ցանկանաս, պէտք է կա-
տարուի: Այո՛, ես կուղարկեմ Կէսարէային քեզ մօտ, միայն թէ
խնդրեմ մի նեղանալ իմ վերայ. իմ ուրախութիւնը ընդունիր
այնպէս ինչպէս որ կայ, որովհետեւ ես չեմ կարող ուրիշ կերպ
լինել: Ես պէտք է միշտ ուրախանամ երբ քեզ տեսնում եմ»:
Այս ասելով նա դուրս գնաց և շուտով ներս եկաւ Կէսարէան
շրամանը ձեռին:

Կեսարէան մի աղջիկ էր մօտ 20—22 տարեկան և իւր
արտաքին գեղեցկութեամբ շատ էլ յետ չէր մնում Նինօյից:
Նա ունէր Նինօյի նուրբ գծագրութեամբ պատկերը, նոյն ճոխ
սեռութիւնը մազերը և հասակով համարեան նոյնը ինչ որ Նինօն,
ներս պէս բարձրահասակ և բարեկազմ: Կէսարէան ոգևորութեամբ
պատմեց Նինօյին, թէ ինչպէս մօրաքոյր ձալաշվիլին արդէն հկել
է և նրա մասին հարցրեց. և ինքը շտապով զգեստները և սպիտա-
կեղէնները, որ Նինօն հագնելու էր, կարգաւորելուց յետոյ՝ ասաց:

«Օ՛հ, այս ինչ գեղեցիկ գուլպաներ են, սրբան նուրբ և
փափուկ են» ասաց նա դարակներից մինը բաց անելով:

Յետոյ սկսեց նա իւր հիացմունքը յայտնել գողարիկ կօ-
շիկների մասին, ապա շրջազգեստների մասին, լանջանոցների
մասին և երբ պահարանի դուռը բաց արեց և գեղեցիկ զգես-
տանին տեսաւ, նա մնաց սառած կանգնած, աչքերը խոշոր
բաց արած առանց կարող լինելու մի բառ արտասանել:

— «Մեր օրիորդները նախանձից կը տրաքուեն, երբ ձեզ այս
զգեստների մէջ տեսնեն» ասաց նա:

— Կարծում ես դու, որ այդ զգեստները այստեղ հագնելու համար Նինոն հեղձեցելով, միևնոյն ժամանակ մի վարդագոյն գուլպայ քաշելով իւր բարեկազմ ծնկան վերայ:

— Աւ ինչու համար չէք հագնելու:

— Ո՞ւմ համար հագնեմ...

— Շուտ համար... հարցրեց Կեսարէան ժպտալով, զուգահեռ Կարծում էք մենք այստեղ ո՞չ մի գեղեցիկ տղամարդ չունենք: Միթէ Վախտանգ Իսարիձէն, որ գտնուում է բարձրօրում Կնիէտ գիւղում, գեղեցիկ տղամարդ չէ: Ապալեւան Կոնաձէն կամ Իլիկօ Գօմբէլին, որքեք գետի միւս կողմումն են ապրում: Նորա բոլորն էլ շուտով կերեան այստեղ: Շուտ մեղր կայ, այնտեղ կարող են գնալ և մեղուները մինչև անգամ Բաղդադից, ասում է առածը:

Նինոն բարձրաքրքիջ ծիծաղեց, Կեսարէան էլ չկարողացաւ իւր ծաղրը բռնել իւր ասածների վերայ և ընկերացաւ նրան:

— Վախճ. Աստուծոյ, որ դուք եկաք» արուեստից Կեսարէան. «այստեղ շատ հանդարտ և տաղտկալի էր: Իսկ այժմ ուրիշ տեսակ կդառնայ: Այո, այժմ կեանքը կը մտնի մեր տանն էլ և երաժշտութիւն ու պար էլ կունենանք: Մտածեցէք միայն. Զատիկից մինչ օրս ո՞չ մի երաժշտութիւն չեմ լսել, իսկ պարերն համարեմ բոլորովին մոռացել եմ»:

Այս խօսքերից յետոյ նա լռեց, որովհետև ստիպուած էր իւր բոլոր ոյժերը ի մի ժողովել Նինոյի լանջանոցը ամրացնելու համար: Յետոյ Կեսարէան հագցրեց նրան սևագոյն զգեստ և մի քանի բոգէից յետոյ Նինոն արդէն պատրաստ կանգնած էր և երջման նայում էր հայելու մէջ տեսնելու համար թէ արդեօք ամեն բան կարգին է: Նա այսօր դիտաւորութեամբ մի հասարակ զգեստ էր հագել որովհետև գիտէր, որ իւր հօրաքրոջից զատ ո՞չ ոք այնպիսի բաւականութեամբ չէ մտիկ տուել, երբ մի օրիորդ մեծ տիկնոջ նման է վարւում, նա մանուշակ, որ այդ զգեստն էլ նրան սազում էր թանկագիններից ոչ պակաս և նա կարող էր իւր այդ հասարակ զգեստի մէջ էլ գովասանութիւն ստանալ:

Ս. երբ նա արանից յետոյ դահլիճ մտաւ, հօրաքրորը ուրախութիւնից տեղից վեր թռաւ, դիմաւորեց նրան և զրկեց նորան. նորան հետեցին միւս տիկիները, արտայայտելով իրանց ուրախութիւնը նրա գալստեան առթիւ, նրանց հախացքներից կարելի էր գուշակել, որ Նինոյի գեղեցկութեան և վայելակազմութեան մասին յանկարծակիի են եկել, որովհետև Նինոն սպասածից աւելի լաւ ապաւորութիւն թողեց: Նոյնպէս էլ տղամարդիքը ուրախանում էին այդ գեղեցկութիւնը տեսնելով, բայց բոլորից

աւելի ուրախացել էր ծերունի Վասո Գօնէլին, Նինոյի իշխան պապի վաղեմի բարեկամը և հաւատարիմ դրացին:

— Իբր Նինօն սենեակ մտաւ, ես կարծեցի թէ նրա մօրը, հանգուցեալ Վարօյին եմ տեսնում՝ ասաց նա ծերունի Վարիպանիձէին դառնալով, ինչ հրաշալի աղջիկ է դառել, այդքան գեղեցիկ և բոյով ու բուսաթիւ, այնպէս որ նրան նայելով չեմ կարող կշտանալ: Այո, եղբայր, նա ինչպէս պառաւ բուի աչքերն էլ է գերի բռնում և ո՞վ գիտէ ինչ չարիք կարող է հասցնել երիտասարդ մարդկանց. հա՛ հա՛ հա՛...

— Հա՛ հա՛ հա՛, ծիծաղեց ծերունի Վարիպանիձէն և ուրախութիւնից կասկարմիր դարձաւ:

— Դու դեռ ես ինձ չես ասել, թէ արդեօք նա իւր սրտի ընտրածը ունի՞ ճասաց Վասո Գօնէլին. նա արդէն տառնելէն տարեկան է, ուրեմն և ժամանակն է, որ նա իւր համար փեսայ որոնէ մի ընտիր և ազնիւ մարդ, որ նրան արժանի լինէր:

— Հ՛լ՛ըմ, իհարկէ, որ նրա ժամանակն է որ մարդու զնայ՝ պատասխանեց Վարիպանիձէն, բայց ինչպէս երևում է, ինքը դեռ ես իւր ընտրութիւնը չի արել և եթէ ես էլ նրա համար մինն ընտրած ունեմ, դեռ ես չգիտեմ արդեօք Նինոյին էլ հա՛նելի կլինի՞ նա:

— Բայց, պէտք է որ նրան հաճելի լինի, ճեկատեց միւսը. միայն սիրոյ և փոխադարձ յարգանքի սէջ կարող է երջանկութիւնը իւր արմատները ձգել. ուրիշ հողի վերայ նա չէ աճում. այս բանը վաղուց դիտուած է. ճիւմն ունեւ ինկատիւ:

— Ճեկվան Զիգանուն, բարձրում Շարելի գիւղում, նրանից լաւ հազիւ թէ գտնենք:

— Սա բոլորովին համաձայն եմ քո կարծիքի հետ, պատասխանեց Գօնէլին: Նրանից լաւը դժուարութեամբ կարելի կլինի գտնել: Այո, նա ամենից արժանաւորն է ո՛չ միայն իւր հարստութեան պատճառով, այլ որովհետեւ նա բարի ու արդարամիտ մարդ է և աշխատանքից չփախչող:

— Ահա այդ պատճառով էլ նա ինձ դիւր է գալիս, ասաց ծերունի Վարիպանիձէն. նա գործունեայ կալուածատէր է և սիրում է սրբազան հողն ու ջուրը, ինչպէս որ նրանց սիրում էին մեր նախնիքը և ինչպէս որ մենք ենք սիրում նրանց ինչ որ նա ունի, նրանց պահել մինչև անգամ բազմացնել գիտէ և այս է մեզ համար գլխաւոր բանը և այս է մեր կեանքի լուծելու գլխաւոր խնդիրը:

— Բոլորովին ուղիղ է, մրմնջաց Գօնէլին գլուխը շարժելով. «այո՛ Իս է մեր կեանքի գլխաւոր խնդիրը և ինձ ուրա-